ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. մարտի 28—ին Երևանում տեղի ունեցած «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի» նախագծի շուրջ հանրային քննարկումների 2–րդ փուլի

2013թ. մարտի 28–ին Երևանում (Կոնգրես հյուրանոց) ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության կողմից անցկացվեց «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի» նախագծի (Նախագիծ) շուրջ հանրային քննարկումների 2–րդ փուլը:

Հանրային քննարկումներին մասնակցեցին ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների, պետական այլ մարմինների, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, հասարակական և միջազգային կազմակերպությունների՝ խնդրո առարկայով զբաղվող ներկայացուցիչներ: Քննարկումներն անցկացվեցին բարձր մակարդակով, Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության կարևորության գիտակցությամբ և փոխօգնության ձգտումով:

Հանրային քննարկումների համար նախատեսված օրակարգին համապատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ պարոն Եղիշե Կիրակոսյանն իր ողջույնն ու շնորհակալությունը հղեց մասնակիցներին, որոնց քննարկմանը ներկայացրեց նախագծի՝ ***«Կյանքի իրավունք, Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք, Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք, Արդար դատաքննության իրավունք, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ մարդու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելում»*** բաժիններով նախատեսված միջոցառումները:

Տվյալ միջոցառումների առնչությամբ արտահայտվեցին հետևյալ կարծիքները՝

-Հելսինկյան ասոցիացիայի Վանաձորյան գրասենյակի ներկայացուցչի կողմից հարց բարձրացվեց ծրագրի կատարման մոնիտորինգի առնչությամբ, որին ի պատասխան Ազգային անվտանգության խորհրդի ներկայացուցիչը պատասխանեց, որ հաստատվել է կարգադրություն, որով նախատեսված է մոնիտորինգի խմբում գերատեսչություններից բացի 5 հասարակական կազմակերպությունների ընդգրկումը: Մոնիտորինգի խումբը կգործի ԱԱԽ համակարգմամբ և 6 ամիսը մեկ անգամ հաշվետվություն կներկայացնի իրականացված միջոցառումների մասին:

-Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Սոնա Հարությունյանը նկատեց, որ Նախագծում հստակեցված չեն օբյեկտիվ վերստուգիչները:

-Պետական համալսարանի ներկայացուցիչ տիկին Իսկոյանի կարծիքով մարդու կյանքի իրավունքը փոխկապակցված է մյուս բոլոր իրավունքների հետ, որը առանձին բաժնով ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

-ԱԱԽ ներկայացուցիչն առաջարկեց միջոցառումների կատարման ժամկետները նշել միայն տարեթվերով (օր.՝ 2013-2015թթ.), ինչպես նաև ունենալ աղյուսակ «ակնկալվող արդյունքների»:

-Սախարովի կենտրոնի ներկայացուցչի և պարոն Սաքունցի կողմից առաջարկվեց միջոցառումների առաջին կետում քրեակատարողական հիմնարկներից բացի, ավելացնել զինված ուժերը, ծերանոցները, մանկատները և այլ հաստատություններ: Տվյալ միջոցառման առնչությամբ նկատեցին նաև, որ ժամկետը շատ ուշ է նշված:

– 61.1 կետում որպես կատարող առաջարկվեց ավելացնել ՀՀ գլխավոր դատախազությունը:

- «Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք» բաժնում զետեղելու համար պարոն Սաքունցի կողմից առաջարկվեց հետևյալ միջոցառումը՝ «կատարել ոստիկանության բաժին հրավիրվածների գրանցում ոստիկանություն մուտք գործելու պահից, հնարավորություն տալ իրենց հարցադրում կատարել բաժին բերման ենթարկվածների մասով, ինչպես նաև տեղադրել տեսախցիկներ բաժին մուտք գործելը արձանագրելու համար: Ոստիկանության ներկայացուցիչը խոստացավ առաջարկը քննարկել Ոստիկանությունում:

-Արման Դանիելյանը շնորհակալություն հայտնեց իրենց առաջարկները ներառելու համար, սակայն նկատեց, որ բացակայում է իրենց առաջարկած միջոցառումը՝ պայմանական վաղաժամկետ ազատման խնդիրների, դատապարտյալների ռեաբիլիտացիայի և կրթության հետ կապված:

- Սախարովի ներկայացուցիչը նկատեց, որ «Կյանքի իրավունք» բաժնից հանվել է «պայմանական վաղաժամկետ ազատման ոլորտում օրենսդրական անհամապատասխանությունների վերացման» միջոցառումը, ինչն անընդունելի են համարում: 213-րդ կետն առաջարկվեց վերախմբագրել, իսկ 214-րդ կետից՝ հանել «Վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանված» բառերը, «ոստիկանության բաժիններից» բացի ընդգրկելով նաև իրավապահ այլ մարմիններին:

«Վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանված» բառերը հանելու առաջարկի առնչությամբ ՄԻՊ ներկայացուցիչն առարկեց, որ տվյալ գործառույթը սահմանվել է հենց Վճռաբեկ դատարանի որոշմամբ:

-«Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք» բաժնում կրկին կարևորվեց այն միջոցառումը, որով նախատեսվում է համապատասխան քայլերի ձեռնարկումն ուղղված անչափահասների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց իրականացնելը բացառելուն (Սաքունց): Պարոն Կիրակոսյանը տվյալ հարցի շուրջ ներկայացրեց, որ նման գործառույթ արդեն իսկ նախատեսված է Դատաիրավական բարեփոխումների ծրագրով:

Բացի դա, նկատվեց, որ 212 և 213 կետերի միջոցառումներն, ըստ էության, կրկնում են միմյանց: Անհրաժեշտ է հստակեցնել:

Տվյալ բաժնի առնչությամբ առաջարկություններ հնչեցվեցին նաև սոցապ. նախարարության կողմից և խոստացան ներկայացնել գրավոր:

-Պարոն Սաքունցի և ոստիկանության միջև ծավալվեցին բուռն քննարկումներ ոստիկանության տարեկան զեկույցներում խուզարկության մասին մանրամասն հաշվետվություն ներկայացնելու կապակցությամբ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ներկայացնել առաջարկությունները, որոնք կքննարկվեն ոստիկանությունում:

-Ոստիկանությունը ներկայացրեց իր դիտողությունը 62.1 կետի առնչությամբ, որի ձևակերպումը հստակ չէ, իսկ 62.2 կետն ընդհանրապես անընդունելի

համարելով, առաջարկեց հանել: Վիճահարույց է, ըստ ոստիկանության, նաև 63.1 կետը, իսկ 65-րդ կետի մասով կներկայացվեն առաջարկություններ:

-Անհատական տվյալների պաշտպանության առնչությամբ ոստիկանության ներկայացուցիչն ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ Հայաստանի համար արդեն իսկ գործում է «Անհատական տվյալների ավտոմատացված ընթացակարգերի հետ կապված անձանց պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան, որի կատարման համար պատասխանատու գերատեսչություններ են նշանակվել Ոստիկանությունն ու ԱԱԾ-ն, ուստի վերջինիս առնչությամբ միջոցառումների համակատարողներ անհրաժեշտ է նշել նաև ԱԱԾ-ն:

-ՄԻՊ-ն առաջարկեց 64.1 կետում կատարողներ նշել ՄԻՊ-ն ու արդարադատության նախարարությունը:

-65.5 կետում առաջարկվեց «խոցելի խմբեր» և «անչափահասներ» եզրույթները փոխարինել «յուրաքանչյուր ոք» եզրույթով:

-Տիկին Հարությունյանը նշեց նաև, որ «Խոցելի խմբի» ձևակերպումները մի քանիսն են, պետք է հստակեցնել:

-198.1 կետի մասով նշվեց, որ տվյալ խնդիրը կապված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի և իրավական օգնության տրամադրման հետ, ինչն արդեն իսկ նախատեսված է դատահիրավական բարեփոխումների ծրագրում:

-Միևնույն պատճառաբանությամբ առաջարկվեց հանել նաև 200.1 կետը. առարկություններ չեղան:

-*«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ մարդու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելում»* բաժնի առնչությամբ Քաղաքացիական հասարակության ինստիտուտի ներկայացուցչի կողմից նշվեց, որ իրենց առաջարկությունը՝ դատաբժշկական փորձաքննության առնչությամբ հաշվի չի առնվել: Բացի դա, առաջարկվեց որպես քննության անկախության երաշխիք նախատեսել, որ քննությունն իրականացվի առանձին վարույթով այլ դատախազի կողմից. առաջարկը կներկայացվի գրավոր:

Առաջարկվեց նաև ծրագրում տարանջատել «խոշտանգումը» և «բռնությունը»: Տարանջատել է պետք նաև «հոգեբանական» և «ֆիզիկական» խոշտանգումները:

- Պարոն Սաքունցի առաջարկը՝ հասարակական կարգի պահպանումը համայնքային ոստիկանության կողմից իրականացնելու առնչությամբ, որով կկանխվի ոստիկանության վատ վերաբերմունքը քաղաքացիների նկատմամբ, չի ներառվել Ծրագրում: Տվյալ առաջարկը միանգամայն անընդունելի էր ոստիկանության կողմից:

«Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք, Ազատ արտահայտվելու իրավունք, Ազատ ընտրության և հանրաքվեի իրավունք, Խաղաղ հավաքների ազատության իրավունք» բաժիններով նախատեսված միջոցառումների քննարկումը սկսեց «Թրանսփարենսի Ինտերնեյշնլ» հասարակական կազմակերպության ներկայացուցչի խոսքով, որը գոհունակություն հայտնեց նախագծում իրենց կազմակերպության կողմից առաջարկված միջոցառումների ամբողջական ընդգրկման առնչությամբ: Նա շեշտեց միայն, որ անհրաժեշտ է համալրել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի հետ կապված միջոցառման համակատարողներին, որի առնչությամբ իրենց առաջարկը կներկայացվի հետագայում:

-Այս բաժնում կարևորվեց 18.1 կետում նշված «հոգեվորսություն» եզրույթի պարզաբանումը:

-16.1 կետում առաջարկվեց համակատարողներ նշանակել նաև այլ գերատեսչությունների, ինչպես նաև նախատեսել միջոցառում, որով ՀՌԱՀ-ի կազմը կհամալրվի կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներով:

-15 կետում «դպրոցական» եզրույթը համարվեց սահմանափակող, առաջարկվեց այն փոխարինել «ընդհանուր» եզրույթով:

-Կրոնական կազմակերպություններն առաջարկեցին ծրագրում ընդգրկել նաև միջոցառում, որով հնարավորություն կընձեռնվի իրենց այցելելու քրեակատարողական հիմնարկներ, զորամասեր:

-Կրթության նախարարության ներկայացուցիչը ոչ միայն առարկեց առաջարկը, այլև շեշտեց, որ ռազմավարությամբ պետք է ամրագրել բոլոր հաստատություններում քարոզչության բացառումը, ինչպես նաև տվյալ բաժնի միջոցառումներում ներառել նաև ԱԱԽ-ին և ԱԱԾ-ին:

-Սախարովի կենտրոնի ներկայացուցիչը խոսեց «Խղճի, մտքի կրոնական դավանանքի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ՝ ասելով, որ ներկայումս կա օրենքի նախագծի 3 տարբերակ, որոնցից , սակայն ոչ մեկը չի ներկայացվել ՀՀ ԱԺ: Բացի դա, Նախագծի առումով ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ նախատեսված միջոցառումներից դուրս են մնում խղճի և մտքի ազատության իրավունքին առնչվողները, ուստի առաջարկեց տվյալ եզրույթները հանել Նախագծից:

-«Կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի նախագծի առնչությամբ պարոն Կիրակոսյանը շեշտեց, որ այն ներկայացվել է ՀՀ ԱԺ քննարկմանը: Վերջինս հետաձգվել է օրինագիծը լրամշակելու և միջազգային կազմակերպությունների կողմից փորձագիտական քննության անցնելու անհրաժեշտությունից ելնելով:

-Պարոն Կիրակոսյանը արձագանքելով «հոգեորսություն» եզրույթի հետ կապված քննարկմանը, տեղեկացրեց, որ քրեական օրենսգրքի նոր նախագծում «հոգևորսությունը» որպես քրեական հանցագործություն, նախատեսված է:

-Առաջարկություն արվեց նախատեսել միջոցառում՝ արտադատական միջոցներով լրատվանյութերի գրաքննություն անցկացնելու համար:

-Մեկ այլ առաջարկ էր Բողոքների արագ արձագանքման մեխանիզմի ստեղծումը, ինչպես նաև Տեղական ինքնակառավարման մարմինների համար մտքի, խղճի, կրոնական դավանանքի մասով դասընթացների կազմակերպումը:

-Պարոն Սակունցն արեց ևս մի քանի առաջարկություն՝

- Պետական պաշտոնյայի էթիկայի կանոնների սահմանում, նրանց դասընթացների միջոցով իրազեկում,
- Հոգևոր սպասավորների հետ դատապարտյալների և զինվորների համար հանդիպման կարգի սահմանում,
- Դպրոցական ծրագրերի մոնիտորինգի մեխանիզմի ստեղծում:

-26.2 կետի կապակցությամբ տիկին Հարությունյանը խոստացավ առաջարկը ներկայացնել գրավոր:

-Առաջարկվեց 71-րդ կետից հանել օրենսդրական բարեփոխումներին առնչվող մասը, ինչպես նաև քաղաքաշինության նախարարության մասին նշումը՝ որպես կատարող: Բացի դա, միջոցառման բովանդակությունը պետք է

վերախմբագրել (առաջարկությունը կներկայացվի սոցապահովության փոխնախարարի կողմից): Քաղաքաշինության նախարարության մասին նշումն առաջարկվեց հանել նաև 130-րդ կետից:

-Առաջարկվեց քրեակատարողական հիմնարկներում ընտրելու իրավունքի ապահովումը:

-78.1-ի կետի կապակցությամբ առաջարկվեց միջոցառման ժամկետ նշել 2013թ. վերջին եռամսյակը, հստակեցնել «ստորագրված ընտրացուցակներ» եզրույթը: Պարոն Կիրակոսյանը զեկուցեց, որ կետը կլրամշակվի ըստ վերջին ընտրությունների կապակցությամբ արված խորհրդատվությունների:

-Ոստիկանության կողմից առաջարկվեց հանել 74.1 կետը, որն ընդունվեց մեծ դժվարությամբ, իսկ եթե, այնուամենայնիվ վերախմագրման արդյունքում դրույթը պահպանվի, որպես կատարող ավելացնել նաև ԱԱԾ-ին:

-Հավաքների և միավորումների ազատության իրավունքի բաժնի մասով Սախարովի կենտրոնն առաջարկեց փոփոխություններ նախատեսել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքում՝ հստակեցնելով «այնպիսի հեռավորություն», «շենք, շինություն» եզրույթները: Որոշվեց առաջարկը ներկայացնել գրավոր:

«Առողջության իրավունք, կրթության իրավունք, աշխատանք ընտրելու ազատության իրավունք, սեփականության իրավունք, բավարար կենսամակարդակի ապահովման իրավունք, սոցիալական ապահովության իրավունք, բարենպաստ շրջակա միջավայրի իրավունք» բաժինների առնչությամբ արվեցին հետևյալ առաջարկները՝

-224.1 կետում պետք է հստակեցնել «իրեր» եզրույթը, վերախմբագրել, ինչպես նաև որպես կատարողներ ներառել ՊԵԿ-ից բացի այլ գերատեսչությունների:

-Վիճահարույց էր 22.5 կետի միջոցառումը, որի մասով խոստացան ներկայացնել առաջարկություն: Վերախմբագրման կարիք ունի նաև 54-րդ կետը. տվյալ կետի կատարողներ պետք է նախատեսվեն համայնքների ղեկավարները:

-55-րդ կետի վերախմբագրումը կապված է «պատշաճ» եզրույթի հետ, տվյալ կետով նախատեսված միջոցառման պատասխանատուն պետք է լինի համայնքի ղեկավարը, իսկ առարկություն չլինելու դեպքում կետը հնարավոր է ամբողջությամբ հանել:

-56-րդ կետում քաղաքաշինության նախարարության կողմից առաջարկվեց միջոցառման կատարման ժամկետը հստակ չնշել, քանի որ տեսչական խորհուրդը դեմ է այս օրինագծի մշակմանը, որը կարող է ընդհանրապես չնախագծվել:

- Վերոնշյալ գերատեսչության կողմից առաջարկվեց 133-րդ կետում որպես կատարող հանել քաղաքաշինության նախարարությունը:

-Առողջության պահպանման իրավունքի մասով առաջարկվեց նախատեսել շրջանառվող դեղերի նկատմամբ վերահսկողության հանձնախմբի ստեղծում:

-Կրթության իրավունքի մասով առաջարկվեց բարձրացնել անվճար կրթություն ստանալու հնարավորությունը:

-Հնչեցվեց Սահմանադրական դատարանի որոշումների կատարման հետ կապված հարց, որի առնչությամբ պարոն Կիրակոսյանը հայտնեց, որ կա Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա բարեփոխումների խումբ, որը Ծրագրում տվյալ միջոցառումների նախատեսման անհրաժեշտությունը վերացնում է:

-Առողջապահության նախարարության ներկայացուցիչը նշեց, որ կեղծ դեղորայքի հսկողության մասով կա օրենք, տեսչությունն էլ դառնալու է պետական առողջապահական գործակալություն, որը կլուծի դեղորայքի հետ կապված հարցերը: Բարձրացվեց նաև «բժշկական» եզրույթի սխալ լինելու հարցը, նշվեց, որ կան կետեր որոնք առհասարակ պետք է հանվեն (կներկայացվեն գրավոր):

-Կրթության նախարարության կողմից առաջարկվեց հանել 22-րդ կետը, 24.1 կետի անհրաժեշտությունը չկա. օրենսդրորեն էլ, գործնականում էլ կիրառվում է: Անհրաժեշտությունը չկա նաև 26.1 կետի, տվյալ միջոցառումը կիրառվում է:

-Սոցապ. փոխնախարարն առաջարկեց հանել 27, 28, 29, 30 կետերը, սոցապ. նախարարությունը որպես համակատարող ընդգրկել 31, 34 կետերում, 32 կետն ընդունելի է միանգամայն, իսկ 33 կետը վերախմբագրման կարիք ունի, որը կներակայացվի գրավոր:

-Էկոնոմիկայի նախարարությունը նշեց, որ սպառողների հետ կապված իր կողմից ներկայացված առաջարկությունները չեն ընդգրկվել, իսկ 46, 47 կետերն էլ ընդունելի չեն:

-Առաջարկվեց միջոցառում կապված կրթության ոլորտում արտաքին ստուգումների հետ, ինչպես նաև շրջանավարտների զբաղվածության հարցի բարձրացման հետ:

-Էներգետիկայի նախարարության կողմից առաջարկվեց հանել 172.1, 176.1 կետերը, վերախմբագրել 177.1,178.1 կետերը, իսկ 187.1 կետից էլ հանել «հանքային ջրեր» եզրույթը:

-30.1 կետի կապակցությամբ սոցապ. փոխնախարարը նշեց, որ պատրաստ է վերանայել այն կառավարության 579 որոշման կոնտեքստում:

-ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչն ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ «ուժեղացնել հսկողություն» եզրույթը ռիսկային է: 190.1 կետում պետք է ավելացնել համակատարողներին:

-225 կետի առնչությամբ առաջարկը մերժվեց, 186.1 կետի կատարողների մասում տնտեսական մրցակցության հանձնաժողովը պետք է փոխել հանրային կարգավորման ծառայությամբ, իսկ 189.1 կետի կատարողը նշել էկոնոմիկայի նախարարությունը:

-Գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչը 45.1 կետի առնչությամբ անդրադարձավ ԳՄՕ պարունակող սերմերի ներմուծման վերահսկողությանը, որն ըստ իրենց գտնվում է պատշաճ մակարդակում:

-Վերոնշյալ գերատեսչության կողմից առաջարկվեց ապահովագրության վերաբերյալ 40.1 կետը միացնել վարկավորման մասին 50.1 կետին, 49.1 կետի առնչությամբ առաջարկեցին որպես կատարող ավելացնել Կենտրոնական բանկին:

-189.1 կետում էկոնոմիկայի նախարարությունը որպես կատարող ավելացնելու առաջարկի առնչությամբ շեշտվեց, որ տնտեսական մրցակցության հանձնաժողովը որպես կատարող պետք է պահպանվի:

«Թիրախային/խոցելի խմբեր և նոր առաջարկությունների ընդգրկում» մասում քննարկվեցին հետևյալ հարցերը՝

-150.1 կետում առաջարկվեց որպես կատարող ավելացնել ՀՀ ոստիկանությունը:

-151.1 կետի միջոցառման առնչությամբ վերանայել կառավարության 330 որոշումը:

-153.2 կետը համապատասխանեցնել 150.1 կետին:

-155.1 կետի առնչությամբ Սախարովի կենտրոնը խոստացավ ներկայացնել առաջարկություն, որը պետք է քննարկել շահագրգիռ գերատեսչությունների հետ:

-Անձնագրերի համար առաջարկվեց վերանայել «Պետական տուրքի մասին» օրենքը՝ քաղաքացիության և քաղաքացիություն չունենալու անձնագրերի համար պետական տուրքերի տարբերության մասով:

-Միգրացիայի մասով նշվեց, որ կա օրենսդրական փոփոխությունների փաթեթ:

-152.2 կետն առաջարկվեց հանել, 154.1 կետում միգրացիայի գործակալության փոխարեն նշել ՀՀ ոստիկանությանը, բացի դա, Ոստիկանության անձնագրային բաժնի փոխարեն նախագծում կատարող նշել ՀՀ ոստիկանությանը:

-Նշվեց, որ 157.1 կետը կրկնում է 153.2 կետին, իսկ ապաքաղաքացիության մասով էլ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարվել է:

-155.1 կետում պետք է մնա «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքի բարեփոխումը, օրենքի 12-րդ հոդվածը կքննարկվի ոստիկանության և համապատասխան ՀԿ ներկայացուցչի միջև:

-151.1 կետի ՄԻՊ առաջարկը «Հանրակացարան» ՊՈԱԿ-ի մասով պետք է կոնկրետացվի և այնուհետ ներկայացվի ՀՀ արդարադատության նախարարություն:

- Անհրաժեշտ համարվեց ոստիկանությունը որպես կատարող ներառել 115, 117, 118 կետերում:

-Պաշտպանության նախարարությունն առարկեց 26.1 կետի առնչությամբ և խոստացավ իր նկատառումները ներկայացնել գրավոր:

-Երեխաների իրավունքների մասով վիճահարույց են 106-108-րդ կետերով նախատեսված միջոցառումները. առաջարկվեց հանել:

-120.1 կետում առաջարկվեց որպես կատարող ավելացնել սոցապ. նախարարությանը և ոստիկանությանը:

-Սախարովի կենտրոնի կողմից առաջարկվեց իրականացնել որդեգրման մեխանիզմների դյուրացում, համապատասխանեցում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային:

-157.1 կետի առնչությամբ հնչեց առաջարկ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի կիրառման համար նախատեսված միջոցառումների վերաբերյալ (Սախարովի կենտրոնի կողմից առաջարկը կներկայացվի գրավոր):

-122 կետում նշված օրինագիծը գտնվում է կառավարությունում, սակայն միջոցառումը պահպանելու հարցը վիճահարույց է:

-123 և 127 կետերն առաջարկվեց հանել, 129.1 կետում էլ «ծերանոց» եզրույթը փոխարինել համապատասխան ձևակերպմամբ:

-139 կետը պետք է հանել, քանի որ կրկնություն է, 138.1 կետում «հիմնախնդիրներ» եզրույթը կոնկրետացնել, 136.2 կետում գրել «ընդհանուր տիպի կրթական հաստատություններ», 145.1 կետում պարզ չէ խոցելի խմբերի առանձնացման հարցը, 128.1 կետում կրկնվում է ժամկետը, 129 կետում որպես կատարող ավելացնել սոցապ. նախարարությունը:

-«Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի հետ կապված միջոցառման անհրաժեշտությունն այլևս չկա, առաջարկվել է հանել:

-246 կետում գործողությունը և միջոցառումները իրենց տեղերում չեն. պետք է փոխել:

-248-289-րդ կետերում կան կրկնություններ, որոնցից պետք է ձերբազատվել:

-Վիճահարույց է 255.1 կետի միջոցառումը:

-252.1 կետի մասով նշվեց, որ զինծառայողի բուժումն անվճար է, սոցիալական վնասի, բարոյական փոխհատուցման հարցը ՊՆ-ի համար վիճահարույց է:

-Բժշկական մանրակրկիտ հետազոտության հարցի կարգավորումը կա 255.4 կետում:

-257 կետն առաջարկվում է հանել. ՍԴՈ-ի հետ կապված հարցն անընդունելի է: 257.1 կետն էլ պետք է քննարկվի:

-ՄԻՊ-ն առաջարկեց 257.4 կետով նախորդ իր առաջարկն անպայման ներառել:

-Իր՝ «Ռազմական օմբուդսմենի» մասով առաջարկն է պնդում պահպանել պարոն Սակունցը:

-234.1 կետի մասով համապատասխան առաջարկ կներկայացվի Սախարովի կենտրոնի ներկայացուցչի կողմից:

Քննարկումների արդյունքում որոշվեց մինչև ապրիլի 2-ը ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնց հիման վրա վերջնական տեսքի կբերվի ծրագրի նախագիծը: